

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

ՀԱՅ Կ Դ Ի Ի Ց Ա Ջ Ն

Վ Է Պ

Ի Է. ԱՐՍԵՆԷ Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ

Հայկական քնարը կ'երևայ թէ իննևտասներորդ դարուս օրերը կ'ուզէ վրէժն առնուլ այն երկաթի ու անբարբառ լուռութեանը, որով այսչափ դարերէ 'ի վեր անգործ թողուցեր էր զբնիկ լեզուն : Եւ ինչպէս պատմութեան հարցը նելով կը տեսնենք որ ամէն ազգաց մէջ լուսաւորութեան դռները բացողն բանաստեղծական ոգին եղած է, ասկէց ուրեմն անխաբելի նշան մը ունինք ձեռունիս թէ նաև մեզի՝ Հայ ազգիս ալ յառաջագիւտութեան պայծառ արշալոյսը ծագեր է : Եւ ակայն տգիտութեան սահմանէն լուսաւորութեան սահմանն անցնելու ատեննիս՝ պէտք էր որ անանկ բարձր կոթող մը յիշատակարան կանգնէինք այս երկու սահմանաց մէջտեղը, որ զգալի կերպով մը զանազանուէին իրարմէ խաւարի ու լուսոյ գաւառները : Եւս պարծանքը ջանացեր է ստանալ կիրթ ու արդիւնաւոր բանաստեղծ մը, Հ. Արսէն Կ. Բագրատունի Վարդապետը, դիւցազնական քերթուած մը նուիրելով 'ի պատիւ Ղլգին առաջին նախահօրը դիւցազն Հայկայ, և երգելով 'ի նմա Հայոց և հաւատոյ ազատութիւնը բռնակալի մը և ինքնահնար մարդկեղէն աստուծոյ մը ձեռքէն, և անով՝ ազգային կառավարութեան հաստահիմն ամրանալը : Եւ այս պարծանքը ապահովցրնելու համար քերթողին, ազնուախոհ հայկազուն իշխան մը, վսեմափայլ սեպուհն ՄԻՀՐԱՆ ՊԷՅ ՏԻԻՋ իր բանասէր ախորժակովն ուզեր է ճոխ ու պատկերազարդ տպագրութեամբ մը ընծայել տալով զայն 'ի լոյս՝ իմացընել Հայկին գովեստը գրող տողերուն իրեն սրտին վրայ ըրած ազգեցութիւնը :

Եւ թէ այսպիսի քերթուած մը, որուն մէջ բանաստեղծին խանդը ուրիշ վախճան և ուրիշ նպատակ չէ՝ ունեցած՝ եթէ ոչ ազգային փառքը դրուատել ու հռչակել եռանդնալից զգացմամբ մը, և մատնանիշ ցուցընել Հայ ժողովրդոց թէ ինչպիսի նախահայր և ինչպիսի քաջեր ու առաքինիներ կեանք տուեր են իրենց, այսպիսի քերթուած մը կ'ըսենք եթէ ուրիշ գեղեցկութիւններ և արժանիք ալ չունենար՝ բայց եթէ այսպիսի ազնուական և հարկաւոր գրաւոր փառասիրութեան մը ծառայած ըլլալը, անտարակոյս դարձեալ երախտագէտ սրտիւ պիտի ընդունուէր ամէն ճշմարիտ և իմաստութիւնը պատուող հայրենակիցներէ : Արուհետեւ բնածին զգացմունք մը անշուշտ կը յորդորէր հետեւելու



այս բանիս մէջ (Յունաց , Լատինացւոյ , Խտալացւոյ , Բնգղիացւոյ և Լուսիտանացւոյ , որոնք Հոմերոսի , Վիրգիլիոսի , Վաստոյի , Սիլիոյի և Վամոնէնսի այնպիսի սէր , այնպիսի մեծարանք և այնպիսի պատիւ կու տան , որ յայտնի կը ցուցնէ թէ որ և իցէ ազգի մը համար քան ուրիշ ամէն տեսակ բանաստեղծութիւն՝ ախորժելի ու մեծ է զիւցազներգակ քերթութիւնը . և ընդ հակառակն ալ յայտնի է ամենուն թէ ինչպէս Վաղղիացւոյ պէս նշանաւոր ազգ մը կը ցաւի ու կը վշտանայ որ ինչուան այսօրուան օրս այս մասին մէջ նախանձորդ մը հանած չէ միւս յիշատակուած ազգերուն : Բւելորդ ալ կը սեպենք յիշեցընելու թէ ՀԱՅԿ ԴԻԻՅԱԶՆ քերթութեան հեղինակը առաջինն եղեր է բոլոր ազգին մէջ այս վեհ մտածութիւնը ծնանելու իր մտացը մէջ և բազմաթիւ ու անյաղթելի դժուարութիւններու յաղթելով՝ արդեամբք ալ ՚ի գործ դնելու . որով նաև ստեղծեր է Հայոց համար զիւցազներգակ բանաստեղծութեան յարմար նոր արժանաւոր լեզու և նոր ընտիր ոճ մը , զարդարելով այն ընտիր տաղաչափութեամբ , զոր ինքը ազգային հին քերթութեանց մնացորդներու մէջէն սրական տեսութեամբ դուրս հանեց կենդանացուց ՚ի վայելս հայ հանճարներու : Վանի քանի՜ հայ սրտերէ հայրենասէր տենչանաց քաղցր արձագանգներ երբեմն երբեմն կը սլանային ու կը մաղթէին և կը հրաւիրէին մարդկային կենաց երկնային խանձարուրքէն այն քերթողն , որ ազգին երախտահատոյց շնորհակալութիւնը փառաւոր ու հանդիսական կերպով մը յայտնէ մեր նահապետին հայկայ , և ասով Բզգը գոնէ անոր գործոց յիշատակը անմահ պահէ իր մտացն ու իր բերնին մէջ . . . և ահա հասաւ այն օրը , յափշտակուեցաւ վերացաւ Բանաստեղծը հայկայ ժամանակը , տեսաւ ճանչցաւ զզիւցազնն ու անոր մեծութեան խորքը , դարձաւ երկիր ու քարտիսի մը վրայ դրոշմեց տեսածները , և կ'աւանդէ զանոնք Բզգին ձեռքը : Բայ , այս Վերթողը իբրև առանձնական մարդ մը մտածելու չէ . այլ ինքը հայ ժողովրդեան սրտին հաւատարիմ թարգմանն է , ինքը ազգասիրաց ըղձիցը լրումն տուողը , և համառօտ ասել՝ Հայոց բանաստեղծութեան Ոգին այս հանճարը որոշեց հաւնեցաւ և անոր յանձնեց այս սրբազան պաշտօնը :

Իսկ մենք Վերթողին այսպիսի վսեմական գործոյ մը ձեռք զարնելը ուրախալից բերանով գովելէն ետքը , հոս կը կտրենք մեր խօսքը , և քերթուածոյն վրայ քննութիւն ընեն և որ կարգի զիւցազներգութեանց մէջ դասելը՝ Բզգին և ճշմարտասէր ու բանիբուն քննադատից կը թողունք :

